


1.2. Արտադրություն (ծառայություններ)

1.2.1. Արդյունաբերություն

Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը: 2000թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում, ըստ 1234 արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև ամենամսյա վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առաձգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշի), փաստացի գներով, թողարկվել է 298102.1 մլն դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 298399.5 մլն դրամի արտադրանք, այդ թվում ԱՊՀ երկրներում՝ 28082.7 մլն դրամի, այլ երկրներում՝ 47880.8 մլն դրամի արտադրանք:

1999թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 106.4 տոկոս, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը առանց էներգետիկայի՝ 108.1տոկոս:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան տոկոսներով 1998թ. դեկտեմբերի նկատմամբ



Արդյունաբերական արտադրանքի դինամիկան

(տոկոսներով)

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
1999 թ.			
հունվար	91.3	105.1	91.3
փետրվար	89.7	85.4	81.9
մարտ	126.2	97.9	103.4
ապրիլ	86.6	106.0	89.5
մայիս	98.3	108.3	88.0
հունիս	131.3	118.4	115.5
հուլիս	88.9	123.1	102.7
օգոստոս	108.6	122.7	111.5
սեպտեմբեր	90.1	106.9	100.5
հոկտեմբեր	97.3	106.5	97.8
նոյեմբեր	98.8	100.7	96.6
դեկտեմբեր	112.8	91.4	109.0
2000 թ.			
հունվար	80.7	94.3	80.7
փետրվար	111.1	108.0	89.7

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
մարտ	105.5	99.4	94.6
ապրիլ	89.0	95.4	84.2
մայիս	111.3	119.8	93.7
հունիս	103.9	102.0	97.4
հուլիս	104.8	104.3	102.1
օգոստոս	103.5	105.9	105.7
սեպտեմբեր	96.7	107.0	102.2
հոկտեմբեր	99.3	107.1	101.5
նոյեմբեր	96.5	108.5	97.9
դեկտեմբեր	124.5	123.1	121.9

**Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը,
ըստ գործունեության հիմնական տեսակների¹**



	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, փաստացի գներով ² , մլն դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, փաստացի գներով ² , մլն դրամ	2000թ. հունվար-դեկտեմբերին, արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ֆիզիկական ծավալի ինդեքսը տոկոսով 1999թ. հունվար – դեկտեմբերի նկատմամբ (համադրելի գներով)
Ամբողջ արդյունաբերությունը <i>այդ թվում՝</i>	298102.1	298399.5	106.4
Էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում	90659.0	90659.0	102.6
Լեռնահանքային արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում	16054.3	14335.2	124.8
Վերամշակող արդյունաբերություն <i>որից՝</i>	191388.8	193405.3	106.9
սննդամթերքների արտադրություն	109133.3	110800.0	104.5
ծխախոտի ապրանքների արտադրություն	11357.7	11064.3	107.3
տեքստիլ (մանածագործական) ապրանքների արտադրություն	1428.8	1552.9	118.4
հագուստի արտադրություն	2103.3	2082.6	75.1
կաշվի դաբադում և մշակում, կոշիկի, ճամպուրկների, պայուսակների, թամբա-լծասարքային իրերի արտադրություն	256.3	239.3	136.0
փայտանյութի և փայտե իրերի արտադրություն	867.1	878.3	234.6
քիմիական նյութերի և քիմիական արտադրանքի արտադրություն	9766.0	7482.9	120.0
ռետինե և պլաստմասսայե իրերի արտադրություն	542.0	591.4	84.6
ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն	7152.8	7357.3	75.6
մետալուրգիական արդյունաբերություն	16381.8	17654.3	214.6
մետաղամշակման արդյունաբերություն	1939.5	2085.7	77.4
մեքենաների և սարքավորումների արտադրություն	4465.0	3909.8	125.7
թանկարժեք իրերի արտադրություն	16594.6	16942.2	90.7

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն, ըստ



¹ Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ գործունեության հիմնական տեսակների, առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1210-201):

² Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:


արտադրության սեկտորների 2000թ. հունվար - դեկտեմբերին



Էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում




Լեռնահանքային արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում



- մետաղային հանքաքարի արդյունահանում
- լեռնահանքային արդյունաբերության և բաց հանքերի շահագործման այլ բնագավառներ

Վերամշակող արդյունաբերություն




- 1-սննդամթերքների արտադրություն
- 2-ծխախոտի ապրանքների արտադրություն
- 3-տեքստիլ (մանածագործական) ապրանքների արտադրություն
- 4-հագուստի արտադրություն
- 5-քիմիական նյութերի և քիմիական արտադրանքի արտադրություն
- 6-ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն
- 7-մետալուրգիական արդյունաբերություն
- 8-մետաղամշակման արդյունաբերություն
- 9-մեքենաների և սարքավորումների արտադրություն
- 10-թանկարժեք իրերի արտադրություն
- 11-գործունեության այլ տեսակներ

2000թ. հունվար-հունիս արտադրանքի ծավալ

ել է թողարկված նույն իրացված և

թողարկված արտադրանքի ծավալների հարաբերակցությունը, ըստ գործունեության հիմնական տեսակների, բնութագրվում է հետևյալով.

Իրացված արտադրանքը տոկոսներով թողարկված արտադրանքի ծավալի նկատմամբ



- 1 - էլեկտրաէներգիա, գազ, ջրամատակարարում
- 2 - Լեռնահանքային արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում
- 3 - Վերամշակող արդյունաբերություն, որից՝
- 4 - սննդամթերքների արտադրություն
- 5 - ծխախոտի ապրանքների արտադրություն
- 6 - տեքստիլ (մանածագործական) ապրանքների արտադրություն
- 7 - հագուստի արտադրություն
- 8 - կաշվի դաբաղում և մշակում, կոշիկի, ճամպուրկների, պայուսակների, թամբա-լծասարքային իրերի արտադրություն
- 9 - փայտանյութի և փայտե իրերի արտադրություն
- 10 - քիմիական նյութերի և քիմիական արտադրանքի արտադրություն
- 11 - ռետինե և պլաստմասսայե իրերի արտադրություն
- 12 - ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն
- 13 - մետալուրգիական արդյունաբերություն
- 14 - մետաղամշակման արդյունաբերություն
- 15 -մեքենաների և սարքավորումների արտադրություն
- 16 - թանկարժեք իրերի արտադրություն

2000թ. հունվար-դեկտեմբերին արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ մարզերի և ք. Երևանի

	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, փաստացի գներով, մլն դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, փաստացի գներով, մլն դրամ	2000 թ. հունվար-դեկտեմբերին արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ֆիզիկական ծավալի ինդեքսը տոկոսով 1999թ. հունվար – դեկտեմբերի նկատմամբ (համադրելի գներով)
Հանրապետությունը, ընդամենը	298102.1	298399.5	106.4
<i>այդ թվում՝</i>			
ք. Երևան ³	129359.3	131666.0	106.7
Արագածոտնի մարզ	3549.6	3649.6	94.9
Արարատի մարզ	15265.7	14447.2	99.7
Արմավիրի մարզ	23399.5	23628.3	94.0
Գեղարքունիքի մարզ	6908.3	7444.8	101.9
Լոռու մարզ	14712.2	14735.0	132.3
Կոտայքի մարզ	47563.6	47297.5	111.6
Շիրակի մարզ	8360.9	8258.6	98.1
Սյունիքի մարզ	19907.3	18187.9	120.5
Վայոց Ձորի մարզ	2639.8	2665.7	136.7
Տավուշի մարզ	2855.7	2838.7	96.9


Ինչպես երևում է վերը բերված տվյալներից, 2000թ. հունվար - դեկտեմբերին նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ Երևան քաղաքի, ինչպես նաև հանրապետության 10-ը մարզերից 5-ի արդյունաբերական կազմակերպություններում արձանագրվել է արդյունաբերական արտադրության աճ: Երևան քաղաքում այն կազմել է 6.7%՝ հիմնականում ի հաշիվ սննդամթերքների և ընպելիքների արտադրության (1999թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ աճի տեմպը կազմել է 111.0%), մետալուրգիական արդյունաբերության (137.2%), էլեկտրական մեքենաների և սարքերի ու սարքավորումների արտադրության (130.9%), մեքենաների և սարքավորումների արտադրության (122.8%), քիմիական նյութերի և քիմիական արտադրանքի արտադրության (120.3%), պոլիգրաֆիական արդյունաբերության (114.7%), տեքստիլ ապրանքների արտադրության (114.0%), ծխախոտի ապրանքների արտադրության (107.0%):

Վայոց Ձորի մարզում արտադրության աճը կազմել է 36.7%՝ հիմնականում ի հաշիվ սննդամթերքների և ընպելիքների արտադրության (137.6%), ինչպես նաև թանկարժեք իրերի արտադրության (151.5%), Լոռու և Սյունիքի մարզերում՝ 32.3% և 20.5%, գրեթե ամբողջությամբ, համապատասխանաբար, մետալուրգիական արդյունաբերության (15.5 անգամ) և լեռնահանքային արդյունաբերության (127.7%), Կոտայքի մարզում՝ 11.6%, տեքստիլ ապրանքների (2.1 անգամ), մետալուրգիական արդյունաբերության (2.0 անգամ), թանկարժեք իրերի (132.6%), մեքենաների և սարքավորումների (118.3%) ու էլեկտրաէներգիայի (114.7%) արտադրությունների և Գեղարքունիքի մարզում՝ 1.9%՝ ռադիոյի, հեռուստատեսության և կապի սարքերի ու սարքավորումների (3.2 անգամ), ծխախոտի ապրանքների (2.6 անգամ) և տեքստիլ ապրանքների (2.0 անգամ) արտադրությունների հաշվին:

Հարկ է նշել, որ Երևան քաղաքի արդյունաբերական կազմակերպությունների կողմից թողարկված արտադրանքի տեսակարար կշիռն արդյունաբերության ընդհանուր ծավալում կազմել է 47.1%: Ջգալի է նաև Կոտայքի մարզում թողարկված արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը: 2000թ. հունվար-դեկտեմբերին այն կազմել է 17.3 տոկոս:

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ Երևան քաղաքի և հանրապետության մարզերի 2000թ. հունվար-դեկտեմբերին

³ ք. Երևանի և հանրապետության մարզերի կազմակերպությունների կողմից թողարկված արտադրանքի ընդհանուր ծավալներում ընդգրկված չեն էլեկտրաէներգիա (ջերմային էներգիա) բաշխող ցանցերի արտադրանքը: Հաշվետու ժամանակաշրջանում այն կազմել է 23580.2 մլն դրամ:



2000թ. հունվար-դեկտեմբերին արտադրված (հաշվառվող) 111 հիմնական արտադրատեսակներից (բնեղեն արտահայտությամբ) 61 գծով ձեռք է բերվել կամ գերազանցվել նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի արտադրության մակարդակը, այդ թվում արտադրատեսակական նշանակության արտադրանքի՝ 54-ից 32-ի և սպառողական ապրանքների՝ 57-ից 29-ի գծով:

Սպառողական ապրանքների արտադրության ծավալները

(համադրելի բացթողնման գներով, մլն դրամ)

	Փաստացի թողարկումը		Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, տոկոսով
	2000 թ.	1999 թ.	
Սպառողական ապրանքներ, ընդամենը	153828.7	139414.6	110.3
այդ թվում՝			
պարենային ապրանքներ	96561.1	91438.7	105.6
ալկոհոլային խմիչքներ (ներառյալ գարեջուրը)	20401.5	14031.3	145.4
ոչ պարենային ապրանքներ, ընդամենը	36866.1	33944.6	108.6
այդ թվում՝			
թեթև արդյունաբերության	7871.8	9904.4	79.5
մշակութային և տնտեսական նշանակության	28994.3	24040.2	120.6

Ընդհանուր առմամբ, 2000թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում թողարկվել է 5957.6 մլն կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 1999թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 104.2 տոկոսը: Ընդ որում, ՋԷԿ-երում և ՋԷԿ-երում արտադրված էլեկտրաէներգիան ավելացել է համապատասխանաբար, 10.4 և 5.1 տոկոսով, իսկ ՅԱԷԿ-ում նվազել է 3.5 տոկոսով:

2000թ. հունվար-դեկտեմբերին ՅԱԷԿ-ը թողարկել է 2005.4 մլն կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հաշվետու ժամանակաշրջանում հանրապետությունում թողարկված ամբողջ էլեկտրաէներգիայի 33.7 տոկոսը, ՋԷԿ-երը, համապատասխանաբար՝ 2691.9 մլն կվտ ժամ, 45.2 տոկոս, ՋԷԿ-երը՝ 1260.3 մլն կվտ ժամ, 21.1 տոկոս:

2000թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում թողարկվել է 680.9 հազ.Յկալ ջերմային էներգիա, որը կազմել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 108.7 տոկոսը:

2000թ. հունվար-դեկտեմբերին սննդի արդյունաբերության ճյուղի կազմակերպությունների կողմից հիմնական արտադրատեսակների թողարկումը⁴

	2000 թ. հունվար-դեկտեմբեր	1999 թ. հունվար-դեկտեմբեր	2000թ. հունվար-դեկտեմբերը տոկոսով 1999թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ
Ձկան որս, տոննա	389.2	447.2	87.0
Միս ⁵ , տոննա	36830	32093	114.8
Երշիկեղեն, տոննա	700.8	452.8	154.8
Պանիր ⁵ , տոննա	4376	4401	99.4
Պաղպաղակ, տոննա	812.8	696.3	116.7
Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի) ⁵ , հազ. տոննա	267.0	269.5	99.1
Պահածո, հազ. պայմ. բանկա	65581	57589	113.9
Այլուր, հազ. տոննա	146.9	147.7	99.5
Չավարեղեն, տոննա	36.0	324.0	11.1
Հաց և հացամթերք, հազ. տոննա	367.9	373.5	98.5
Հրուշակեղեն, տոննա	3080	835	3.7 անգամ
Սակարոնեղեն, տոննա	930	718	129.6
Օղի, հազ. լիտր	10086	8707	115.8
Կոնյակ, հազ. լիտր	2845.1	1207.5	2.4 անգամ
Խաղողի գինի, հազ. լիտր	2592.7	4310.9	60.1
Շամպայն գինի, հազ. շիշ	795.1	938.4	84.7
Գարեջուր, հազ. լիտր	7940	8421	94.3
Ոչ ալկոհոլային ըմպելիքներ հազ. լիտր	19304	22244	86.8
Հանքային ջրեր, հազ. 0,5 լ շիշ	37076	22496	164.8
Աղ, տոննա	30030	26955	111.4
Սիգարետներ, մլն. հատ	2096.4	3131.6 ⁰	66.9

2000թ. հունվար-դեկտեմբերին թեթև արդյունաբերության ճյուղի կազմակերպությունների կողմից հիմնական արտադրատեսակների թողարկումը

	2000 թ. հունվար-դեկտեմբեր	1999 թ. հունվար-դեկտեմբեր	2000 թ. հունվար-դեկտեմբերը տոկոսով 1999 թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ
Բամբակյա գործվածքներ, հազ. մ ²	219.2	157.3 ⁰	139.4
Բրդյա գործվածքներ, հազ. մ ²	38.3	5.4	7.1 անգամ
Մետաքսյա գործվածքներ, հազ. մ ²	16.0	21.0	76.2
Գորգեր և գորգեղեն, հազ. մ ²	19.3	18.4	104.9
Գուլպեղեն, հազ. զույգ	850.6	386.8	2.2 անգամ
Տրիկոտաժեղեն, հազ. հատ	1756.3	1852.8	94.8
Բամբակյա մանվածքաթելեր, տոննա	80.3	54.6	147.1
Բրդյա մանվածքաթելեր, տոննա	17.9	24.1	74.3
Կարի արտադրանք, մլն. դրամ	6284.4	8381.4	75.0

2000թ. հունվար-դեկտեմբերին **քիմիական** արդյունաբերության ճյուղի հիմնական արտադրատեսակներից լաքաներկանյութերի արտադրությունը 1999թ. համապատասխան

⁴ Այստեղ և հետայսու բերված տեղեկատվությունը առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» վիճակագրական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1210-202):

⁵ Ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը):

Ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 75.8%-ով, սինթետիկ կաուչուկինը՝ 56.2%-ով, կաուստիկ սոդայինը՝ 23.8%-ով, քիմիկա-դեղագործական արտադրանքինը՝ 18.5%-ով, իսկ պլաստմասսայից իրերի արտադրությունը նվազել է 36.8 տոկոսով:

2000թ. հունվար-դեկտեմբերին շինանյութերի արդյունաբերության ճյուղի կազմակերպությունների կողմից հիմնական արտադրատեսակների թողարկումը

	2000 թ. հունվար-դեկտեմբեր	1999 թ. հունվար-դեկտեմբեր	2000 թ. հունվար- դեկտեմբերը տոկոսով 1999թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ
Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ, մ ³	17960	41954	42.8
Ապրանքային բետոն, մ ³	21568	25219	85.5
Երեսպատման սալեր բնական քարից, մ ²	39746	39195	101.4
Ոչ հանքային շինանյութեր, հազ. մ ³	71.1	137.5	51.7
Կիր, տոննա	5273	4107	128.4
Գաջ, տոննա	9630	11652	82.6
Ցեմենտ, հազ. տոննա	218.7	286.9	76.2
Կանոնավոր կտրվածքի տուֆ, մ ³	48945	67955	72.0
Ծակոտկեն լցանյութեր, հազ. մ ³	94.6	119.2	79.4
Կլինկեր, հազ. տոննա	235.5	284.4	82.8

Մետալուրգիական արդյունաբերության ճյուղի կազմակերպությունների կողմից հաշվետու ժամանակաշրջանում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պլունինե փայլաթիթեղի արտադրությունը ավելացել է 109.9 անգամ, սև պղնձինը՝ 13.5 անգամ, պլունինե գլանվածքինը և պողպատե ձուլվածքինը՝ 3.4 անգամ և պղինձ պղնձե խտանյութում՝ 24.8%-ով:

2000թ. հունվար – դեկտեմբերին մեքենաշինության ճյուղի կազմակերպությունների կողմից հիմնական արտադրատեսակների թողարկումը

	2000 թ. հունվար-դեկտեմբեր	1999 թ. հունվար-դեկտեմբեր	2000 թ. հունվար- դեկտեմբերը տոկոսով 1999 թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ
Մետաղահատ հաստոցներ, հատ	203	164	123.8
Ուելներ, հազ. հատ	140.3	114.6	122.4
Ուժային ճկուն կաբելներ, կմ	14.3	25.5	56.1
Ուժային կաբելներ մինչև 1կՎ լարման համար, կմ	1492	230	6.5 անգամ
Շարժական էլեկտրակայաններ, հատ	27	1	27 անգամ
Ուժային տրանսֆորմատորներ, հատ	22	-	-
Ավտոմեքենաներ, հատ	50	3	16.7 անգամ
Տեղակայման հաղորդալարեր, կմ	3937	1598	2.5 անգամ
Ճնշակներ, հատ	2	82	2.4
Կենտրոնախույս պոմպեր, հատ	2472	1724	143.4
Փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, հատ	4424 ^o	175 ^o	25.3 անգամ
63-355 մմ բարձրությամբ պտտման առանցքով փոփոխական հոսանքի էլեկտրաշարժիչներ, հատ	1260	25	50.4 անգամ
0.5-100 կՎտ հզորության փոփոխական հոսանքի զեներատորներ, հատ	-	23	-